

ՀԱԾՎԵՏՎԱՌՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի

իանձնաժողովի

1997 թ. գործունեության

Երևան - 1998 թ

Ներածություն

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թ. ապրիլի 3-ի № ՆՀ 717 հրամանագրով: «Հ էներգետիկայի հանձնաժողովի նախագահը, փոխնախագահը և 3 անդամները նշանակվել են Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թ. ապրիլի 15-ի № ՆՀ 720 հրամանագրով»:

«Հ էներգետիկայի հանձնաժողովը էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է Հ «Էներգետիկայի մասին» օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա և ինքնուրույն է իր իրավասության շրջանակներում»:

«Հ էներգետիկայի հանձնաժողովի կազմը՝


Մովսեսյան Վարդան	նախագահ
Գրիգորյան Նիկոլայ	նախագահի տեղակալ
Հովսեփյան Աշոտ	հանձնաժողովի անդամ
Աճեմյան Էմիլ	հանձնաժողովի անդամ
Ավագյան Մելք	հանձնաժողովի անդամ

«Հ էներգետիկայի հանձնաժողովն իր գործունեությունն իրականացրել է աշխատակազմի միջոցով, որի կառուցվածքը ներկայացված է նկ. 1-ում»:

«Հ էներգետիկայի հանձնաժողովի ընթացիկ աշխատանքներն իրականացվել են՝ համաձայն Հ «Հ էներգետիկայի հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված «Հ «Հ էներգետիկայի հանձնաժողովի առաջնահերթ աշխատանքների ծրագրի և ժամանակացույցի» և Հ «Հ էներգետիկայի նախարարի

ու «Հներգետիկայի հանձ-նաժողովի նախագահի կողմից հաստատված «Հներգետիկայի մասին» ՀՀ օրենքի կիրարկմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ժամանակացույցի»:

ՀՀ ԷՆԵՐԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՉԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



« Էներգետիկայի հանձնաժողովի հիմնական խնդիրները և իրավասությունները ամրագրված են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի № 19 և № 20 հոդվածներով:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1997թ. գործունեությունը

1. Սակագնային քաղաքականություն

« Էներգետիկայի բնագավառի արտադրող, ներկրող, հաղորդող (փոխադրող) և բաշխող տնտեսավարող սուբյեկտների 1996-97 թթ. ֆինանսատնտեսական գործունեության և 1997 թ. առաջին կիսամյակի էներգետիկ հաշվեկշռի ուսումնասիրության հիման վրա նախատեսված տարեկան ծախսերը համակարգվել են ըստ գերակայության և, փոխանակածայն սկզբունքով, որոշվել են անվտանգ ու արդյունավետ գործունեությունն ապահովող շահագործման, պահպանման, անհետաձգելի և ընթացիկ վերանորոգման նվազագույն ծախսերը, իսկ բնական գազի գծով՝ նաև բնակչության գազամատակարարման վերսկսման և գազահաշվիչների գնման ու տեղադրման ծախսերը, որոնց հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով սպառողների հուսալի էներգամատակարարման ապահովման պայմանները, սահմանվել են՝

- Էլեկտրակայաններում (ՁԵԿ-եր, ՀԵԿ-եր, ՀԱԵԿ) արտադրվող էլեկտրական էներգիայի,
- «Հայէներգո» ՊԶ կողմից բաշխիչ ցանցերին (11 մարզային բաշխիչ ՊԶ) վաճառվող էլեկտրական էներգիայի,
- 35 կՎ և բարձր լարման, 6(10) կՎ լարման անմիջական և 0.4 կՎ լարման սպառողներին (այդ թվում բնակչությանը) վաճառվող էլեկտրական էներգիայի,
- Զերմային էլեկտրակայաններում (Երևանի և Հրազդանի ՁԵԿ-եր) արտադրվող զերմային էներգիայի,
- «Զերմային ցանցեր» ՊԶ կողմից բնակավայրերին վաճառվող զերմային էներգիայի,

- 1997-98թթ. ձմռան ժամանակաշրջանի կենտրոնացված զեօռուցման (Հայաստանի Հանրապետության 22 բնակավայրերի համար),
- ամսական մինչև 10.0 հազ նխմ և 10.0 հազ նխմ ավելի սպառում ունեցող սպառողներին (այդ թվում բնակչությանը) վաճառվող բնական գազի,
- բնական գազի ներկրման ծառայությունների,
- բնական գազի տեղափոխման (ներառյալ՝ պահեստավորումը) ծառայությունների,
- բնական գազի բաշխման ծառայությունների

սակագները, որոնք հրապարակվել են մամուլում և «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում»:

Մշակվել է Էներգետիկայի բնագավառում սակագների վերանայման կարգի նախագիծը: Միջազգային հաշվապահական ստանդարտների և «Հներգետիկայի հանձնաժողովի հատուկ պահանջների հիման վրա մշակվել են սակագների հայտի և հիմնավորող փաստաթղթերի, տնտեսավարող սուբյեկտների հաշվապահական և ֆինանսատնտեսական հաշվետվությունների օրինակելի ձևերի նախագծերը:

1998թ. «Հներգետիկայի հանձնաժողովի գործունեության ծրագրի մշակման շրջանակներում կատարվել է 1998թ. Էներգետիկ հաշվեկշռի կանխատեսում, որի հիման վրա և, հաշվի առնելով տնտեսական օբյեկտիվ գործընթացները, տրվել են սակագների հնարավոր փոփոխության կանխատեսումները:

2. Գործունեության լիցենզիավորում

ԱՄՆ, կենտրոնական Եվրոպայի և ԱՊՀ մի շարք երկրների փորձի ուսումնասիրության արդյունքներով և, հաշվի առնելով «Հներգետիկայի բնագավառի և «Հներգետիկայի օրենսդրության առանձնահատկությունները, մշակվել են՝

- Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի նախագիծը,

- Էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության, հաղորդման (փոխադրման), բաշխման, բնական գազի փոխադրման (տեղափոխման) և բաշխման, փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզիաների օրինակելի ձևերի և լիցենզավորվող գործունեության պայմանների նախագծերը, որոնք ուղարկվել են շահագրգիռ նախարարություններին և տնտեսավարող սուբյեկտներին՝ դիտողություններ և առաջարկություններ ստանալու ակնկալիքով:

3. Մատակարարման պայմանագրերի օրինակելի ձևերի մշակում, պայմանագրերի գրանցում

«Օրենսդրության և նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, մշակվել և հանձնվել են իրապարակման « « Հերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում»՝

բնական գազ ներկրող - բնական գազ փոխադրող (տեղափոխող),

բնական գազ բաշխող - բնակչություն,

բնական գազ բաշխող - իրավաբանական կարգավիճակով սպառողներ

պայմանագրերի օրինակելի ձևերը:

Մշակվել և իրապարակվել է մատակարարման պայմանագրերի գրանցման կարգը:

1997թ. գրանցվել են՝

«Հայգազարդ» ՊԿ (ներկրող) - «Հայտրանսգազ» ՊԶ (փոխադրող),
 «Հայտրանսգազ» ՊԶ (փոխադրող) - «Հայգազ» ՊԶ (բաշխող),
 «Հայգազարդ» ՊԿ (ներկրող) - «Հայգազ» ՊԶ (բաշխող)

պայմանագրերը:

1997թ. մշակվել և դիտողություններ ու առաջարկություններ ստանալու ակնկալիքով շահագրգիռ նախարարություններ և տնտեսավարող անձերին են ուղարկվել մատակարարման հետևյալ պայմանագրերի նախագծերը՝

Էլեկտրական էներգիա սպառող - Էլեկտրական էներգիա բաշխող,

Էլեկտրական էներգիա հաղորդող - էլեկտրական էներգիա բաշխող,
 ջեռուցման նպատակով ջերմային էներգիա (տաք ջրի տեսքով)
 արտադրող - ջերմային էներգիա սպառող,
 ջերմային էներգիա (շոգու տեսքով) փոխադրող - ջերմային էներգիա
 սպառող,
 ջերմային էներգիա (շոգու և տաք ջրի տեսքով) արտադրող - ջերմային
 էներգիա փոխադրող,
 ջերմային էներգիա (տաք ջրի տեսքով) փոխադրող - ջերմային էներգիա
 բաշխող,
 ջերմային էներգիա բաշխող - բնակչություն:

4. Համագործակցությունը պետական, օրենսդրական մարմինների և զանգվածային լրատվական միջոցների հետ

1997թ. << էներգետիկայի հանձնաժողովը քննարկել և դիտողություններ ու
 առաջարկություններ է ներկայացրել << օրենքների և << կառավարության
 որոշումների հետևյալ նախագծերի վերաբերյալ՝

«Էներգախնայողության մասին» << օրենքի նախագիծ,

«Նավթի և գազի մասին» << օրենքի նախագիծ,

«Ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման մասին» << օրենքի
 նախագիծ,

«Էլեկտրական և ջերմային էներգիայի, բնական գազի ապօրինի սպառման
 դեպքերում պատասխանատվություն սահմանելու մասին» << օրենքի
 նախագիծ,

«<< կառավարության 1997թ. հունիսի 25 № 221 որոշման մեջ փոփո-
 խություններ կատարելու մասին» << կառավարության որոշման
 նախագիծ,

«Եներգահամակարգի ֆինանսական կենսունակության վերականգնմանն ուղղված միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,

«Եներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

ՀՀ էներգետիկայի հաճնաժողովի կողմից քննարկվել և դիտողություններ ու առաջարկություններ են արվել ՀՀ էներգետիկայի նախարարության կողմից մշակված «Էլեկտրական էներգիայից օգտվելու կանոնների», «Զերմային էներգիայից օգտվելու կանոնների», «Բնական գազից օգտվելու կանոնների» վերաբերյալ:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովն իր մասնակցությունն է ունեցել «ՀայՈՒՍԳԱՎԱՐԴ» ՓԲԸ կանոնադրական փաստաթղթերի, ՀՀ գազատրանսպորտային համակարգի հիմնական միջոցները «ՀայՈՒՍԳԱՎԱՐԴ» ՓԲԸ հանձնելու մասին համաձայնագրի, ինչպես նաև ՀՀ գազի ներկրման պայմանագրի մշակման գործընթացին:

1997 թ. սեպտեմբերին մշակվել է ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998 թ. գործունեության ծրագիրը, որը ներկայացվել է Ազգային ժողով: Նշված ծրագրի մեկնաբանությամբ ՀՀ Ազգային ժողովում ելույթ է ունեցել հանձնաժողովի նախագահ Վ. Մովսեսյանը:

1997 թ. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից բազմից կազմակերպվել և անց են կացվել մամուլի ասուլիսներ և ձեպագրույցներ: ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի նախագահից և անդամներից վերցվել են հարցազրույցներ, որոնք հեռարձակվել են ազգային ռադիոյով և հեռուստատեսությամբ, տպագրվել հանրապետական թերթերում:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտներից, իրավաբանական կարգավիճակով սպառողներից և բնակչությունից ստացել է զգալի քանակությամբ նամակներ՝ կապված «Եներգետիկայի մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի կիրարկման հետ և բոլորին տվել սպառիչ պատասխաններ, անհրաժեշտության դեպքում՝ կազմակերպելով քննարկումներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

5. Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

Եներգետիկայի բնագավառում իրականացվող բարեփոխումների, օտարերկրյա ներդրումների խթանման և ներդրողների համար երաշխիքների ապահովման, միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական համակարգին անցման, էներգետիկայի բնագավառի կարգավորման մասնագետների պատրաստման և այլ հարցերի առնչությամբ << Էներգետիկայի հանձնաժողովը բազմիցս հանդիպումներ է ունեցել և բանակցություններ վարել Համաշխարհային բանկի (WB), ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ-ի Էներգետիկ գործակալության (USEA), ԱՄՆ-ի Hagler Bailly և հունական «KANTOR» խորհրդատվական ընկերությունների, միջազգային առողջորդական Price-Waterhouse և KPMG ընկերությունների, միջազգային կրթության ինստիտուտի (IIIE), ինչպես նաև բազմաթիվ մասնավոր ֆինանսական, տնտեսական կազմակերպությունների և անհատ ձեռներեցների հետ:

<< Էներգետիկայի հանձնաժողովը գործնական կապեր է հաստատել մի շարք երկրների (Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Հունգարիա և այլն), ինչպես նաև ԱՄՆ Մեն, Նյու-Հեմպշիր և Կենտուկի նահանգների հասարարական ծառայությունների հանձնաժողովների հետ:

<< Էներգետիկայի հանձնաժողովի կայացման, նրա անդամների և աշխատակազմի մասնագիտական որակավորման բարձրացման գործընթացին մշտական օգնություն է ցույց տվել ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունը (USAID):

1997թ. նշված գործակալության ֆինանսական միջոցներով ԱՄՆ-ի Hagler Bailly խորհրդատվական ընկերությունը << Էներգետիկայի հանձնաժողովին մատուցել է խորհրդատվական ծառայություններ, իրականացրել << Էներգետիկայի հանձնաժողովի կողմից մշակված նորմատիվ-իրավական և տեխնիկական փաստաթղթերի փորձաքննությունը, << Էներգետիկայի հանձնաժողովի աշխատակազմի համար կազմակերպել մասնագիտական դասընթացներ՝ Երևանում և հատուկ ուսուցում՝ ԱՄՆ-ում, ապահովել է << Էներգետիկայի հանձնաժողովի մասնակցությունը իր կողմից Բուդապեշտում կազմակերպված կենտրոնական Եվրոպայի և ԱՊՀ երկրների Էներգետիկայի

բնագավառի կարգավորող մարմինների կոնֆերանսին:Ուսուցման ծրագրեր են իրականացվել նաև ԱՄՆ Էներգետիկ գործակալության (USEA) և Համաշխարհային բանկի (WB) աջակցությամբ:

6. <<Էներգետիկայի հանձնաժողովի գործունեության ֆինանսական հաշվետվություն

1997թ. <<Էներգետիկայի հանձնաժողովի գործունեությունը իրականացվել է բյուջեից և Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական աջակցության առաջին վարկային ծրագրի (SATAAC-1) միջոցներից: Ֆինանսական հաշվետվությունն ըստ ծախսերի հոդվածների ներկայացված է № 1 և № 2 աղյուսակներում:

1997 թ. ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը <<Էներգետիկայի հանձնաժողովին, որպես տեխնիկական օգնություն, տրամադրել է համակարգչային և կազմակերպական տեխնիկա, տրանսպորտային միջոցներ և նյութեր՝ 90100 ԱՄՆ դոլար գումարային արժեքով:

Բյուջեից հատկացված միջոցների ծախսերի հաշվետվությունը աղ. № 1

№	Ծախսի հոդված թ	Ծախսի անվանումը	Հատկացվել է բյուջեից (հազ.դրամ)	Փաստացի ծախսվել է (հազ.դրամ)	Մնացորդ (հազ.դրամ)
1	2	3	4	5.	6
1.	01	Աշխատավարձ	8840.0	8840.0	-
2.	02	Աշխատավարձի վրաեկ	3182.4	3182.4	-
3.	03	Գրասենյակային ապրանքներ	85.0	85.0	-

4.	12	Գույքի և սարքավորումների ձեռքբերում	2.5	2.5	-
5.	13	Տրանսպորտային ծախսեր	250.0	250.0	-
6.	17	Ներկայացուցչական ծախսեր	-	-	-
7.	18	Այլ ծախսեր	-	-	-
		Ընդամենը	12359.9	12359.9	-

SATAC –1 վարկային ծրագրից հատկացված միջոցների ծախսերի
հաշվետվությունը

աղ. № 2

№	Ծախսի անվանումը	Հատկացվել է (հազ.դրամ)	Փաստացի ծախսվել է (հազ.դրամ)	Մնացորդը* (տնտեսվել է) (հազ.դրամ)
1	2	3	4	5
1.	Աշխատակազմի աշխատավարձը հունիս- դեկտեմբեր ամիսներին	20550.0	16428.0	4122.0
2.	Շենքի վարձավճար	4000.0	3332.0	668.0
3.	Տնտեսական ծախսեր	3062.5	3078.6	-16.1

4.	Գործուղում	2984.0	1925.6	1058.4
5.	Հաղորդակցման ծախսեր	2984.0	831.8	2152.2
6.	Կոմունալ ծախսեր	1044.5	570.6	473.9
7.	Տրանսպորտային ծախսեր	3481.5	3274.2	207.3
8.	Նորոգման ծախսեր	1890.0	998.0	892.0
9.	Այլ ծախսեր	497.5	492.3	5.2
10.	Տեղական խորհրդատվական ծախսեր	6963.0	-	6963.0
11.	Հրատարակչական ծախսեր	1591.5	-	1591.5
12.	Սեմինարների կազմակերպում և անցկացում	1193.5	-	1193.5
	Ընդամենը	50242.0	30931.1	19310.9

* Տնտեսված միջոցներից 11626.479 հազ. դրամը << կառավարության 1998 թ. փետրվարի 5-ի № 47 որոշմամբ հատկացվել է << էներգետիկայի հանձնաժողովին 1998 թվականի հաղորդակցման, տեղական խորհրդատվական, հրատարակչական, սեմինարների կազմակերպման ծախսային հոդվածներով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար: